«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԻՋԵՎԱՆ 2017

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանի զարգացման հայեցակարգի հիմնական նպատակն է լուծել գրադարանի կայացման և զարգացման համար հրատապ նշանակություն ունեցող խնդիրները:

Հայեցակարգը հնարավորություն կտա կանոնակարգելու միջազգային չափանիշներին համահունչ գրադարանային ոլորտի առաջընթացները և դրանց իրականացման հաջորդականությունը: Հայեցակարգը իրատեսական է և ենթադրում է գործողությունների իրականացման կոնկրետ ժամանակահատվածներ, որտեղ հաշվի են առնված գրադարանի անցյալ և ներկա կառուցվածքային գործառնական հնարավորությունները՝ ապահովելով դեպի ապագան միտված դրանց հավանական զարգացումը:

Գրադարանը սույն հայեցակարգը իրականացնելու է համագործակցելով մասնաճյուղի գիտակրթական համակարգի մյուս ստորաբաժանումների հետ: Հայեցակարգը կոչված է ապահովելու գիտակրթական համակարգի զարգացման առջև դրված խնդիրները:

1. Գրադարանի արդիականացումը որպես գիտակրթական համակարգի զարգացման երաշխիք

ԵՊՀ ԻՄ-ի գրադարանը ձևավորվել է 1991թվականին: Տեղեկատվական հիմնական աշխատանքները երկար ժամանակ կատարվում էին ավանդական գրադարանային սպասարկմամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ սկսվեց գրադարանային պաշարների էլեկտրոնայնացման, ինչպես նաև թվայնացման գործընթացը: Եվ դրա արդյունքում գրադարանը թևակոխեց զարգացման նոր մակարդակ, որն էլ հնարավորություն ստեղծեց բարձրացնել մասնագիտական գործառության իրականացման արդյունավետության աստիճանը: Այդպիսով գրադարանը դադարեց լինել միայն գրականության պաշարների համալրման և պահպանման հաստատություն: 2006թ կատարված բարեփոխումներից հետո մեր գրադարանը արդեն ուներ հետևյալ ենթաբաժինները՝

ա/ գրականության համալրման և վերամշակման

բ/ գրականության սպասարկման

գ/ աբոնեմենտի

դ/ գրապահոց

ե/ համակարգչային ծառայությունների և էլեկտրոնային գրադարանի

Գրականության համալրման և վերամշակման ենթաբաժնի հիմնական գործառույթն է ստացված նոր գրականության մուտքագրումը և վերամշակումը, այնուհետև հանձնումը համապատասխան ենթաբաժիններին:

Այս ենթաբաժնի նպատակն է ընթերցողին ապահովել ուսումնական ծրագրերին անհրաժեշտ համապատասխան գրականությամբ, հանդեսներով, ամսագրերով: Ընթերցասրահները անընդհատ համալրվում է նոր ստացված գրականությամբ:

Նմանատիպ աշխատանքների իրականացումը ունի ռազմավարական նշանակություն, քանի որ գրադարանի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է նոր գրականության պաշարների հետևողական համալրումով: Գրականության համալրման գործընթացը կատարվում է միայն համապատասխան ֆակուլտետների և ամբիոնների կողմից ներկայացված պատվերների հիման վրա:

Աբոնեմենտի ենթաբաժին

Այս բաժնի հիմնական գործառույթներն են ընթերցողների գրանցումը և տացքը, որը տարիներ ի վեր իրականացվում է ավանդական եղանակով: Անհրաժեշտություն կա այս գործառույթները դարձնել էլեկտրոնային, քանի որ առաջատար գրադարանային համալիր ունեցող երկրներում վաղուց արդեն իրականացվել են:

Գրականության սպասարկման ենթաբաժին

Այս բաժնի հիմնական գործառույթն է ընթերցողներին ապահովել ուսումնական ծրագրերին համապատասխան անհրաժեշտ գրականությամբ, հանդեսներով, ամսագրերով: Յուրաքանչյուր ընթերցասրահի առձեռն գրականության պաշարներն անընդհատ համալրվում է նոր գրքերով:

Գրապահոցի բաժին

Գրապահոցի բաժինն իրականացնում է գրականության պահպանում, վերականգնում և սպասարկում:

Գրապահոցները տեղակայված են 1-ին և 2-րդ մասնաշենքերում: Բաժնի ուսումնական գրապաշարների հիման վրա ստեղծվեց առձեռն դասագրքային ֆոնդ: Քանի որ գրապահոցները անընդհատ համալրվում է նոր գրականությամբ, անհրաժեշտ է վերանայել և զտել արդիականությունը կորցրած գրականությունը:

Այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է համագործակցել բոլոր ֆակուլտետների հետ՝ ներգրավելով մասնագետներ համապատասխան ամբիոններից:

Համակարգչային ծառայությունների և էլեկտրոնային գրադարանի բաժինը իրականացնում է էլեկտրոնային համահավաք գրացուցակի կազմման, գրականության մուտքագրման, գրադարանային գործընթացների էլեկտրոնացման, գրականության պաշարների թվայնացման աշխատանքներ:

2. Գրականության շտեմարանները՝ որպես էլեկտրոնային ուսուցման և հեռուսուցման համակարգեր

Պետք է ստեղծել այնպիսի տեղեկատվական համակարգ, որտեղ թվայնացված գրականությունը հասանելի դարձվի ընթերցողներին: Գրադարանային շտեմարանների, սարքավորումների և համապատասխան ծրագրերի առկա վիճակը կարող են արդյունավետ նախապայման ստեղծել հեռուսուցման համակարգի ներդրման համար: Պարբերաբար պետք է ավելացնել էլեկտրոնային գրականության քանակը և շարունակաբար կատարել թվայնացման աշխատանքները: Այդ աշխատանքները գրադարանի արդիականացման համար ունի ռազմավարական նշանակություն:

Էլեկտրոնային տարբերակով տեղադրելով տեղեկատվություն՝ /դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ/, գրադարանը կկարողանա բարենպաստ պայմաններ ստեղծել ուսուցման և հեռուսուցման համար: Նմանատիպ ուսուցումը պետք է իրականացվի հատուկ դասընթացների միջոցով, համագործակցելով համապատասխան մասնագետների հետ:

Պետք է նաև նշել, որ էլեկտրոնային գրադարանի կայքը լայն հնարավորություններ կընձեռի ուսանողությանը առցանց ընթերցելու մասնագիտական գրականություն:

3. Աշխատակազմի մասնագիտական պատրաստականությունն ու վերապատրաստումը

Գրադարանի զարգացման կարևոր բաղադրիչներից է գրադարանավարների մասնագիտական պատրաստվածությունն ու վերապատրաստման գործընթացը: Գրադարանի գործառույթները տարատեսակ են և բազմաբնույթ: Գրադարանի գործունեության զարգացման և արդիականացման նպատակով անհրաժեշտություն դարձավ նրա տեխնիկական վերազինումը, այդ թվում համակարգիչների, տպիչների, ինտերնետային կապի և էլեկտրոնային հաղորդակցման ապահովումը, այլ սարքավորումների ձեռքբերումը: Այդ խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է՝

ա/ մշակել աշխատանքային պարտականությունների կատարման ընթացակարգ

բ/ մշակել աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության և խրախուսման համակարգ

գ/ ստեղծել միջազգային փորձի փոխանակման և տեղայնացման նախապայմաններ

4.Միջգրադարանային համագործակցություն և անդամակցություն

Այս առումով ԵՊՀ ԻՄ գրադարանի համար կարևոր է համագործակցությունը միջբուհային գրադարանային համակարգերի հետ, դա նախապայմաններ կստեղծի խնդիրների համատեղ լուծման համար: Կիրականացվի գրադարանային միավորում, որը կնպաստի գիտակրթական համակարգի բազմաթիվ խնդիրների լուծմանը:

Գրադարանային միավորումների անդամությունը կնպաստի գրադարանային գործառնական արդյունավետության բարձրացմանը և համալսարանական կրթության զարգացմանը:

5.Համակարգչային պատրաստվածություն,անվտանգություն և շենքային պայմաններ

Վերոհիշյալ խնդիրների լուծման համատեքստում կարևոր նշանակություն ունի համակարգչային պատրաստվածությունը և շենքային պայմանները: Առանձնահատուկ նշանակություն ունի բավարար լուսավորության ապահովումը, ջեռուցումը, կայուն ջերմաստիճանի առկայություն, ինչպես նաև ընթերցասրահների արդիականացումը, տեխնիկական վերազինումը, գրադարանային շտեմարանների անվտանգությունը,արդիական հակահրդեհային համակարգը: Տեղեկատվության, մուտքագրված և թվայնացված գրականության շտեմարանների պահպանումը, ինչպես նաև արխիվացումը ու տարածումը պետք է դառնա գրադարանի հաղորդակցման հնարավորությունների զարգացման հենքը:

Նպատակահարմար է նաև գրադարանում ընթերցողների իրերի և հագուստի համար նախատեսված դարակների ու կախիչների տեղադրումը, որը կապահովի գրադարանի ֆոնդերի և գույքի անվտանգությունը: Գրադարանի տարածքների վերահսկողությունը կիրականացնեն սպասարկման բաժնի աշխատակիցները: